121 Դժվար է քայլել մենակ, առանց Քեզ,

1. Դժվար է քայլել մենակ, առանց Քեզ,
Փոխի՛ր բնույթս, դառնամ խոնարհ, հեզ,
Խղճա՛ անճարիս, կրկին արի՛ տես,
Ողորմած Փրկիչ, հազար մեղա Քեզ:

Տե՛ր, լվա՛ մեղքերս,
Տե՛ր, բուժի՛ր վերքերս,
Որ խոսի իմ սերը,
Փրկարար Տերս:

2. Չեմ կարող ապրել առանց Քեզ, Տերս,
Ես վայր եմ ընկած՝ մեկնած է ձեռքս,
Ընկածիս հանի՛ր, Հիսուս սիրելի,
Որ նախկին սիրով սիրեմ Քեզ էլի:

3. Նենգ անօրենը հանգիստ չի տալիս,
Երբ թուլանում եմ, այցի է գալիս,
Ատել է տալիս նույնիսկ եղբորս,
Որ սևի փոխի այս պայծառ օրս:

4. Ես մեղավոր եմ, իսկ Դու՝ ճշմարիտ,
Դու միշտ արթուն ես, իսկ ես՝ միամիտ,
Ես՝ Քեզ մոռացող, Դու՝ հավատարիմ,
Դու դեղ ու դարման՝ փրկության ճար իմ: